ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարում է 2020-2021 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ, անվճար հիմունքով, առկա ուսուցմամբ:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ինստիտուտի ռեկտորի անունով, կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

1. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները,
2. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,
3. ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),
4. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Այս տարվա շրջանավարտ-դիմորդներից բարձրագույն կրթության դիպլոմի փոխարեն ընդունվում է համապատասխան տեղեկանք՝ դիմորդի բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանի մասին: Ընդունվողն անձամբ է ներկայացնում անձնագիրը և դիպլոմը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020թ. հունիսի 24-ը (ներառյալ): Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության ժամկետ է սահմանվում ս.թ. հունիսի 29-ը:

Դիմումները ներկայացնել հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 11, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ուսումնագիտական վարչություն, հեռ.՝ (010) 55-33-10(1-02):